ՀԱՐՑԱՇԱՐ
«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

Հարց 1.
Բաժնետիրական ընկերությունն իրավաբանական անձ է և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը՝

Հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում:

(հոդ. 2, մաս 2)

Հարց 2.
Բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի՝

Իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

(հոդ. 2, մաս 2)

Հարց 3.
Գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանվում է օրենքով, բաժնետիրական ընկերությունը կարող է զբաղվել միայն՝

Լիցենզիայի հիման վրա:

(հոդ. 2, մաս 3)

Հարց 4.
Բաժնետիրական ընկերությունն ստեղծված է համարվում՝

Պետական գրանցման պահից:

(հոդ. 2, մաս 4)

Հարց 5.
Բաժնետիրական ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է՝

Իրեն պատկանող ամբողջ գույքով:

(հոդ. 3, մաս 1)

Հարց 6.
Բաժնետիրական ընկերությունը՝

Պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:

(հոդ. 3, մաս 2)

Հարց 7.
Բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան ստեղծել՝

Առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

(հոդ. 5, մաս 1)

Հարց 8.
Բաժնետիրական ընկերության մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները՝

Իրավաբանական անձինք չեն և գործում են ընկերության կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

(հոդ. 5, մաս 3)

Հարց 9.
Բաժնետիրական ընկերությունները կարող են լինել՝

Բաց և փակ, որը պետք է արտահայտվի ընկերության կանոնադրության և ֆիրմային անվանման մեջ:

(հոդ. 8, մաս 1)

Հարց 10.
Բաժնետիրական ընկերության հիմնադիր փաստաթուղթը՝

Ընկերության կանոնադրությունն է:

(հոդ. 14, մաս 1)

Հարց 11.
Լուծարումը բաժնետիրական ընկերության դադարումն է՝

Առանց նրա իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

(հոդ. 27, մաս 1)